

Բ. ԲԵՍԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՈՒՆԵՐԻ ԿՐԾԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիտականորեն անառարկելի կառուցվածք ունեն Ակադեմիայի քարտա-
րանային բաժնում պատրաստվող բնագրային համարարրառությունը: Այդ մա-
սին մենք նմուշներ քերեցինք Եզնիկի համարարրատից, որը տպագրության է
պատրաստվում: Նոյն ձևով արդեն պատրաստ է Զան Կորյունի համարար-
րառը: Սակայն Ակատեգինք, որ քարտարանային բաժնում որոշ մտահոգո-
թյուն է տիրում այն իմաստով, որ այս ձևով պատրաստված համարարրառութ-
յունը ծավալով մի քանի անգամ ավելի ստվար են լինում, քան համարարրատի
ներարկվող գրքերը:

Այս մտահոգությամբ քարտարանային բաժնում կրճատման ձևեր գտնե-
լու փորձներ են կատարվում Ագաթանգեղոսի բնագրային համարարրատի
վրա: Մանոթանալով այդ փորձերին՝ հայտնում ենք մեր կարծիքն ու թեկա-
ղըրանքները:

Ի հարկն՝ անտեղի չեն բնագրային համարարրառների կրճատման հարցը
և անհրաժեշտ է մտածել այդ մասին լրջորեն: Սակայն կարծում ենք, որ այն
սկզբունքը, որով կատարվում են կրճատման փորձերը, համապատասխան
չեն համարարրատի բնագրային բնույթին, որովհետև կրճատումներից հետո
համախ մնում է միայն այնքան տեղեկություն, որն արդեն քերականական
համարարրատին է պատկանում և ոչ թե բնագրայինին: Բերենք ած բայր-
մատի հետ կապված մի քանի նմուշներ: Նախ տալիս ենք կրճատված ձևը,
իսկ հավասարության նշանից հետո տալիս ենք լրիվ բնագիրը՝ կողքին, փա-
կագծերում, հշելով Ագաթանգեղոսի թիֆլիսան 1909 թվականի հրատարա-
կության էջերը:

զմտաւ ածէի=զմտաւ ածէի ... թէ որպիսիք իցեն (382):

ածին զնա=ածին զնա առաջի նորա (66):

ածէ ամճրեւ=ածէ ամճրեւ ի վերայ արդարոց և մեղաորաց (308):

ածեալ ի կատարումն=ածեալ ի կատարումն զառաջապատում պատ-
գամս եսայեալ (246):

զոր ածելոց էք=զոր ածելոց էք դուք ի վերայ մեր (95):

ոչ ածին ընդ միտ=զայն ինչ ոչ ածին ընդ միտ՝ որ ի սկզբանէ Արարիչն
էր (318):

Այսպես և որիշ շատեր: Դնշակես տեսնում ենք՝ կրճատված վկայություն-
ների մեջ մնում են միայն տվյալ բարի քերականական ձևերը՝ կցկտուր կա-
պակցություններով. Աշամակում է՝ մնում են միայն այն տվյալները, որոնք
հաստուկ են քերականական համարարրատին: Դրանում համոզվելու համար
կարելի է այս օրինակները համեմատել Խորենացու քերականական համա-
րրաբառում ած բայրմատով ներկայացված մի շարք ձևերի հետ, որ հայտորդ
էցերում քերեցինք՝ այդ համարարրառը նկարագրելիս:

Այս հանգամանքը զեղծում է բնագրային համարարրատի բնագրավուրությունը՝ նրան հաղորդելով որոշ տոկոսի բնականական բնույթ և ստեղծում այն փոխանակող տպագրությունը, թե բնականական և բնագրային կրչող համարարրատներն իրար են կրկնում:

Բայց, առանց այն է, այսպիսի կրճատումների ենթարկված բնագրերը հաճախ դառնում են անհասկանալի և կասկածելի: Օրինակ՝

ոչ ածէ զբարկութիւն-ոչ ածէ զբարկութիւն իր (267):

ածեազ Աստուծոյ ... արարածն ... առ Աղամ-ածեազ Աստուծոյ զամենայն արարածն... առ Աղամ (143):

Այս օրինակներում մի իր-ի և մի զամենայն-ի կրճատումները ոչ մի օգուտ չեն տալիս տեղ շամելու տեսակետից, բայց, ընդհակառակն, բնականորեն վնաս են տալիս վկայությանը և այն դարձնում անշնորնելի:

Մյուս կողմից՝ այս ձևի կրճատումները գրկում են բնագրային համարրատը իր նպատակին ծառայելուց: Մենք արդեն բավարար շափով խոսեցինք այն մասին, թե բնագրային համարարրատի նպատակը միջընագրային համեմատությունների եզրեր հայթյութելն է, նրանց առնչությունները բացահայտելն է, աղբյուրների հետազոտությունն է: Եթե մի բառ,—միևնույն բառը,—բնագրային անհրաժեշտ կապակցություններով բերված չիմի տարրեր գրքերի համարարրատներում, մենք կզրկվենք նմանությունները նկատելու, հետևաբար և աղբյուրագիտական եզրակացությունների հասնելու, հնարավորությունից: Այստեղ, կրճատված համարարրառում, Աղբիւր բառի տակ տրվում է աղբիւր կենդանութեան, մինչ լրիւ բնագիրն է՝ աղբիւր կենդանութեան զերաշտութիւն ծարաւոյն պասքելոյն յագեցուաց զքեզ (9): Եթե նետագայի որևէ հեղինակ օգտագործել է Ագաթանգեղոսի այս նախադասությունը կամ միտքը, մենք կարող ենք դյուրությամբ գտնել նրա աղբյուրը՝ Ագաթանգեղոսի բնագրային լիարժեք համարարրատի միջոցով. մինչդեռ յոկ աղբիւր կենդանութեան բառերով գրեթե չենք կարող գտնել, որովհետև այդ փոքրիկ արտահայտությունը տարրեր կապակցություններով հարցուրավոր անգամներ գործածված է հայ միջնադարյան հոգևոր գրականության մեջ: Նույնը պիտի ասել աղբիւր կենաց կամ բդիստը աղբիւր և նման կրճատված բնագրերի մասին, որոնք ամենահին պիտանի չեն բնագրային համարարրատի նպատակների համար:

Բնագրային համարարրատի նպատակների տեսակետից ձեռնուու է ոչ թե կրճատել բնագրերը, այլ նպատակահարմար կերպով թեթևացնել բառացանիկը: Հիմնականը պիտի լինի որոշել, թե ի՞նչ կարգի բառեր պետք է ընդունել բառացանիկի մեջ և ի՞նչ կարգի բառեր՝ ոչ, իսկ աս՝ կնշանակի որոշ առումով ընտրողական սկզբունք որդեգրել բարտագրական աշխատանքների մեջ՝ ելենով բնագրային համարարրատի ծանոթ նպատակներից:

Բնագրային նմանություններ ու նույնություններ հայտնաբերելու ծառայող լեզվական գիտակող տարրերն են գոյականները (Եերայյալ հասուն անունները), ածականները և բայերը: Խորի մասերի մեջ ամենից ավելի նրանք են, որ ձևաբանական բազմազան առանձնահատկություններ և ինքնատիպ այլազանություններ են ներկայացնում, ուստի և հիմնականում կարողի է կանգ առնել նրանց վրա: Սկզբունքով կպահիվնեն, որենուն, բոլոր գոյականներն ու ածականները. նմանապես բայերը՝ բացառությամբ էական և մի բանի պակասավոր ու միադիմի բայերի (Եմ, լինիմ, եղանիմ, գոմ, յայս է, տանի է, մարթի և այլն): Խսկ դրանց շարքին չպատկանող բառերը կարենի է

առնասարակ դուրս թողման՝ որպես համեմատությունների գործում դեր չկատարող նյութ: Արդախիսներ են դերանունները (Ես, դո, նա, ինքն, իր, սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, իմ, քո, մեր, ձեր, որ, ով, ոմն, ոք և այլն), թվականները (մի, երկու, երեք, տասն, քսան, երեսուն, առաջին, առաջննորդ, երկրորդ, երրորդ, երկորեան-երկորին, երեքեան-երեքին, կրկին, երեքին, չորեքին, երկեակ, երբեակ, քառեակ և այլն), հայտիրները (իրնաց նորովական բոլոր գործածություններով), հայտրությունները (վասն, բաղագս, աղագս, ի սակա, ի վերապ, ի վերոյ, զման, զկնի, փոխանակ, մինչև, շուրջ և այլն), մակրայնները (այսր, անդր, աստ, աստէն, աստամօր, ազոր, ազուտ, իրեւ, յայնժամ, հանապազ, ընդ վայր, վերատին, ստուգի, հազին, ի դեպ և այլն), շաղկապները (են, նաև, եթէ, թէ, թէն, թէպէտե, կամ, այլ, այլ եթէ, բայց, սակայն, իսկ, ապա եթէ, զի, որպէս զի, վասն զի, քանզի, իբր զի, ապա որեմն, մինչ չեւ, չեւ ես և այլն) և ձայնարկությունները (ո՞, ո՞ն, վա՞յ, վա՞շ, աւա՞ո, օ՞ն և այլն):

Այս կարգի բառերի կրճատումն այսուեղ՝ կորուատ չէ գիտության համար, որովհետև հրանք բոլորն իրնաց տեղը կունենան համարարրատի ենթարկված գորք քերականական համարարրատում: Կարելի է մշակել, ի հարկեն, նաև այս ընդհանուր կարգից կատարվելիք ինչ-ինչ բացառությունների սկզբունքը, եթէ դրանք անհրաժեշտ համարվեն, սակայն պետք է աշխատել՝ չգնալ այդ ուղղուվ, որովհետև բացառություններն անխուսափելիորեն դուռ կրանան բազմապիսի թուրիմացությունների:

Բնագրային համարարրատի նպատակների տեսակետից այս եղանակը չի խախտի համարարրատի բնագրային բնույթը, իսկ մյուս կողմից կապահովի ծավալային շոշափելի տևառությունը ի հաշիվ գորքի բառապաշտի խոշոր զանգվածի:

Սակայն այն դեպքերում, երբ գիրքը քերականական համարարրատ չի ունենալու, պետք չէ կրճատման ենթարկել նրա բնագրային համարարրատը, ո՞ր եղանակով էլ լինի, որպեսզի նա որևէ չափով ծառայի նաև լեզվաբանությամբ: Այս դեպքում արդեն բնագրային համարարրատը պիտի լինի լիակատար: Բնագրերով կրերվեն բոլոր բառերը՝ բացառությամբ նախորդների, որոնց հոլովական գործածությունները ցույց տալու համար կնշվեն միայն էջերը՝ առանց բնագրերի: բայց որպեսզի դրանով չխաթարվի համարարրատի բնագրային բնույթը, նախորդները կտեղապորվեն գորքի վերջում առանձին՝ հավելվածի ձևով: Պետք է նույնական վարվել և շաղկապի հետ: Մեր կարծիքով լավ կլինի, եթե այսպես դասավորվեն նաև Եզիթիկ և Կորյունի բնագրային համարարրատները, որոնք հրատարակության են պատրաստվում:

Այս կապակցությամբ նշենք, որ վերջերս քարտարանային բաժնում կըր-
հաւուման փորձերի հետ միասին փորձեր են արվում նաև բնագրային համա-
րրարրատներում բարի վկայությունները դասավորելու՝ ոչ թէ այն հաջորդակա-
նությամբ, որով հրանք պատահում են համարարրատի ենթարկվող գորքի էջե-
րում, այլ բարի գործածության քերականական ձևերի (հոլովում, խոնարհում,
և այլն): Եթե քերականական այս դիտումը մշակվի ձեռնհատորեն և մուծվի
բնագրային համարարրատի մեջ, կարելի է հուսալ, որ լիովին կվերանա քերա-
կանական առանձին համարարրատներ ունենալու անհրաժեշտությունը: Կվե-
րանա նաև ինչպես վկայությունների բնագրերը կրճատելու, այնպես էլ հա-
մարարրատի բառացանկը թերթաւացնելու հարցը, և համարարրատի երկու տե-
սակների միավորումը լիովին կարահովի անհրաժեշտ խնայողությունը:

